ԴՎԻՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԲԱԶՄԱՆԻՍՏ ԿՆԻՔԸ

ՔՈՉԱՐՅԱՆ Գ. Գ.

Բազմանիստ կնիքը գտնվել է դաշտային գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ՝ Դվին բլրին մերձակա Վերին Արտաշատ գյուղում: Այն կապույտ կիսաթափանց ապակուց ձուլված, ձիու պատկերով, թերի, կիսով չափ կոտրված բազմանիստ կնիք է (լայն.՝ 10 մմ, վերականգնված երկար.՝ մոտ 15 մմ, հաստ.՝ 7 մմ), ունի թելի վրա անցկացնելու երկայնական անցք (նկ. 1-2):

Նկ. 1



Նկ. 2

Կնիքի ճակատային ուղղանկյուն մակերեսի վրա փորագրված է ձիու գլուխ, ձգված պարանոց, փքված կուրծք, միմյանց վրա պրոյեկտված առջևի բարձրացրած ոտքեր: Պատկերի թերի պահպանված մասը, իր պատկերագրական զուսպ արտահայտչամիջոցներով հանդերձ, թույլ է տալիս որոշակի վերապահությամբ փաստել վարգող ձիու պրկված մարմնի դինամիկ շարժում, ներքին լարում, տագնապ:

Կնիքն իր ընդհանուր բնութագրով (փոքր չափերի բազմանիստ, կապույտ ապակի, կենդանու ոճավորված պատկեր) վերաբերում է Հայաստանում և հարակից շրջաններում հայտնաբերված՝ մ.թ.ա. II - մ.թ. I դ. թվագրվող ապակե բազմանիստ կնիքների խմբին[1]: Փոքրասիական բազմանիստ կնիքների շարքում, Ն. Մ. Նիկուլինայի

---

[1] **Խաչատրյան Ժ. Դ.**, *Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները (Պատմա-բանասիրական հանդես, 1965, N 1, էջ 274-276),* **նույնի՝** *Դիտողություններ Հայաստանի հելլենիստական շրջանի գլիպտիկայի մասին (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, N 7, էջ 98, 102),* **Есаян С. А.**, **Калантарян А. А.** *Ошакан I. Основные результаты раскопок 1971-1983 гг., Е., 1988, с. 52, 58, 65-66, табл.*

գնահատմամբ, այս «արտակարգ ինքնատիպ» տարատեսակի ստեղծման համար հիմք են ծառայել «արմատական տեղական ավանդույթները»[2]:

Քննվող խմբին բնորոշ են կենդանիների և (հեծյալ-հետևակ, մարդ-կենդանի, կենդանի-կենդանի) մենամարտի ոչ խոր փորագրությամբ՝ ընդհանրացված, վերացարկված, ծայրահեղորեն պարզեցված ու պայմանական ոչ բնապաշտական պատկերներ: Սրանք իրենց արտահայտչամիջոցների ոճական և իմաստաբանական ընդհանրություններով պատկանում են բացառապես հմայիլ-կնիքների այն տարատեսակին, որոնք դրոշմիչ չեն և վավերացման գործառույթ չեն կատարել:

Կնիքները Հին Արևելքում մ.թ.ա. III հազ. ի վեր ներգրավված էին «ծիսապաշտամունքային արարողությունների համակարգում»[3]: Ըստ հնագույն պատկերացումների՝ քարի տեսակին, գույնին, դրրվագված պատկերին, «աղոթքի, օրհնանքի, մաղթանքի ու նվիրատվության» արձանագիր տեքստին վերագրվում էր աստվածային զորություն:

Վերլուծվող կնիքի կապույտ ապակին թերևս նույնացվել է կրնքագործության մեջ լայնորեն տարածված լաջվարդին (լապիս-լազուր), որին վերագրվում էր հիվանդություններից ու ցավերից բուժող ու զերծ պահող գերբնական հատկություն[4]: Սա հավանական է, քանզի որպես «չար աչքի» դեմ չարիափան միջոց՝ ավանդաբար օգտագործվում են «ջրի ու երկնքի մաքրագործող ուժը խորհրդանշող» կապույտ գույնի հմայիլներ[5]:

Հմայիլ-կնիքների դյութական ուժի ուղղվածությունը՝ նպատակ-թիրախը, դրսևորվում է պատկերագրությամբ: Տվյալ դեպքում առկա է սուրացող ձի, որը, ըստ հ.-ե. առասպելաբանության տոտեմական-աստեղային վաղնջական պատկերացումների, արևի սրբազան կենդանին է, նրա ուղեկիցը, նրա մարմնավորումը[6]: Հայտնի նմանատիպ կնիքների վրա առկա է թռչնի պատկեր (տե՛ս օր. Օշականի կնիքը, նկ. 3)[7]:

XLI,6; XLII,2; XLVII,11, **Խնկիկյան Օ. Ս.**, *Նորահայտ հուշարձան Գորիսում (Պատմա-բանասիրական հանդես, 1981, N 4, էջ 312-314, նկ. 3, 1),* **Гагошидзе Ю. М.** *Могильник Триалети. Каталог III. Могильники античной эпохи, Тбилиси, 1982, с. 69-74.*

[2] **Никулина Н. М.** *К вопросу о "восточно-греческом" и "греко-персидском" искусстве (по материалам глиптики V-IV вв. до н. э.) (Вестник древней истории, 1969, N 3, с. 119).*

[3] *Մանրամասն տե՛ս* **Փիլիպոսյան Ա. Ս.**, *Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, Ե., 1998, էջ 86-91:*

[4] **Патканов К. П.** *Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII веке, СПб., 1873, с. 43-44.*

[5] *Այդ մասին տե՛ս* **Իսրայելյան Ա. Ռ.**, *Հայկական պահպանակները հայոց հավատալիքների համակարգում (Ատենախոսություն պատմ. գիտ. թեկն. գիտ. աստիճանի համար, Ե., 2006, էջ 100-102):*

[6] **Иванов В. В.** *Конь (Мифы народов мира, Энциклопедия, т. I, М., 1980, с. 666);* **Голан А.** *Мифы и символ, М., 1993, с. 49.*

[7] **Есаян С. А.**, **Калантарян А. А.**, *նշվ. աշխ., աղ. XLVII,11,* **Խաչատրյան Ժ. Դ.**, *նշվ. աշխ., էջ 276, նկ. 5,* **Խնկիկյան Օ. Ս.**, *նշվ. աշխ., նկ. 3, 1,* **Лордкипанидзе М. Н.** *Геммы Государственного музея Грузии, III, Каталог*

Նկ. 3

Թռչնի պատկերը հնուց ի վեր երկնքում սավառնելու գաղափարագիրն է: Քննվող կնիքի վրա ձիու պատկերին ուղեկցող թռչնի հնարավոր ներկայությունը կմեկնաբանվեր՝ «արև մարմնավորող ձիու ընթացքը երկնակամարում»[8]:

Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերներում (մ.թ.ա. II հազ. վերջ), ուշ բրոնզերկաթեդարյան պատկերաքանդակ գոտիների առասպելաբանական դրվագներում երկնային ձիու կերպարը մեկնաբանվում է որպես արևի պարբերական շրջապտույտ[9], իսկ հայ բանահյուսական նյութերում ձին ներկայանում է որպես հովանավոր, օգնական, պահապան, իմաստուն, վտանգ կանխարգելող, ճակատագիր տնօրինող[10]:

памятников глиптики, найденных на территории Грузии, Тбилиси, 1961, табл. VII , рис. 48.

Հմմտ. ուշբրոնզեդարյան ծիսահմայական գոտիների հրեղեն ձիերի գավակին թռչնի պատկեր (տե՛ս **Իսրայելյան Հ. Ռ.**, *Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Ե., 1973, նկ. 26, 35 և այլն), ինչպես նաև հեքիաթներում հրեղեն ձիու ձեռքերում՝ թռչնի խորհրդով կամ նրա փետուրով (տե՛ս* **Гулакян С. А.**, *Указатель мотивов армянских волшебных сказок, Е., 1983, с. 169, 258):*

[8] Արևի սկավառակն իր ճանկերում կրող թռչնի մասին տե՛ս **Քոչարյան Գ.**, *Արտահայտչամիջոցների ոճաբանական վերլուծությամբ թվագրման փորձ (Աշտանակ, հայագիտական պարբերագիրք, Բ, Ե., 1998, էջ 158):*

[9] Ախթալայի, Սանահինի, Լճաշենի, Խաչբուլաղի բրոնզե գոտիների վրա, Գեղամա լեռների ժայռապատկերներում Արևի մարդակերպ աստվածությունը կամ Արևի սկավառակը հրեղեն ձիերի ուղեկցությամբ՝ դիտվում են արեգակի պարբերական շրջապտույտը խորհրդանշող իմաստաբանական ամբողջության մեջ: Տե՛ս **Մնացականյան Հ.**, *Արևապաշտության հետքերը Հին Հայաստանում ըստ բրոնզե պեղածո իրերի (Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ. 1, Ե., 1948, էջ 71-76),* **Իսրայելյան Հ. Ռ.**, *նշվ. աշխ., էջ 36, 50-55,* **Մարտիրոսյան Հ. Ա.**, *Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Ե., 1973, էջ 26:*

[10] Հայ վիպական ավանդության մեջ՝ հողմից արագ սլացող, հրեղեն Քուռկիկ Ջալալին, Ձենով Հովանի՝ Սպիտակ, Կարմիր, Սև ձիերը կամ «ամենաարագընթաց ձիու գործառույթ» կատարող Մուրազ Աստված Մուրազ ձին իրենց «արարքներով ու խորհուրդներով» Սասնա հերոսների օգնականներն են ու հովանավորները (տե՛ս Սասնա ծռեր, հ. Դ, նոր պատումների գրառումը և բնագրի պատրաստումը Ս. Հարությունյանի և Ար. Սահակյանի, Ե., 1999, էջ 403-404, 411), հեքիաթներում ձին

Դվինի հմայիլ-կնիքի վրա պատկերված սլացող ձին արևի տեսանելի-երևութական լույսի գաղափարի կրողն է: Տվյալ դեպքում խնդիրը կենդանու պաշտամունքը չէ, այլ սլացող ձիու պատկերին վերագրվող զորության միջոցով երկնայինի հետ հաղորդակցվելը:

Վարգող ձիու «հավակնոտ» պատկերը հնարավոր է վերծանել երազահանգուշակների շրջանում ցարդ գործածական «Ձին մուրազ է» բանաձևով: Այն է՝ տվյալ հմայիլ-կնիքի նպատակ-թիրախն է՝ «իր տիրոջը երկնաշնորհ բաղձանք, փափագ, իղձ ու տենչ պարգևելը»:

Հմայիլ-կնիքի պակասող մասում ձիու գավակին թռչնի պատկերի հնարավոր առկայությունը կլրացներ ձիու թռվիչ կերպարը, կհամալրեր վերծանումը՝ «իր տիրոջը երկնաշնորհ բաղձանք, փափագ, իղձ ու տենչ պարգևող թռչող ձի, հրեղեն ձի»:

МНОГОГРАННАЯ ГЕММА ИЗ ДВИНА

КОЧАРЯН Г. Г.

Резюме

По своей общей характеристике рассматриваемая гемма (мелкий многогранник, синее стекло, стилизованное изображение коня) относится к группе стеклянных многогранных гемм, датируемых II в. до н. э. (I в. н. э. и использовавшихся в качестве амулетов, а не печатей.

արձագանքում է տիրոջ առաջին իսկ կանչին, օգնում փնտրել, գտնել սիրած աղջկան, ձեռք բերել անմահության խնձորներ, դեղ, փախչել դևերից, ջախջախել թշնամուն, նախազգուշացնում է վտանգի պահին, հովանավորում ու փրկում պատանուն և այլն (տե՛ս **Гулакян С. А.**, *նշվ. աշխ., էջ 169-170):*